ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
(Պ-180-02.03.2022-ՖՎ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«է) ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն ~~կանխիկ հայկական դրամով կամ~~ անկանխիկ եղանակով~~՝ բանկային հաշվին և (կամ) էլեկտրոնային փողի հաշվին առկա միջոցներով~~: Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից, բացառությամբ ոչ ռեզիդենտ նույնականացված խաղացողների, ~~կատարվող~~ խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է ~~բանկային հաշվով կամ վճարային քարտով կամ էլեկտրոնային փողի հաշվով՝~~ անկանխիկ եղանակով, ~~նախաձեռնված վճարմամբ~~:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2. 1-ին մասի զ1-ին և զ2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ1) շահումը ~~անկանխիկ ձևով~~ փոխանցում (վճարում) է բանկային պրակտիկայում ընդունված անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով՝ ~~փոխանցելով խաղացողի բանկային հաշվին կամ բանկային քարտին կամ էլեկտրոնային փողի հաշվին.~~»,

«զ2) արգելվում է շահումը փոխանցել (վճարել) այն ~~բանկային, քարտային և/կամ էլեկտրոնային փողի~~ հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները, ինչպես նաև արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»:

Հոդված 3. Սույն Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 2.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.2 Օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջով:»:

Հոդված ~~4~~3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգավորումները ուժի մեջ են մտնում վեց ամիս հետո~~1-ին և 2-րդ հոդվածներով սահմանված էլեկտրոնային փողին վերաբերվող կարգավորումները գործում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս ժամկետով~~: